

ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒՅՈՒՆ

ՓՈՐՉՆԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒՅՈՒՆ ԱՐԴԻԻՆՔՆԵՐԸ

Պրօֆ. Երևատ Մելիքյանի «Դասախոսութիւններ փորձնական մանկավարժութեան մասին» դրսից

ԾՐԱԲՈՒՅՈՒՆ

XI

ՓՈՐՃԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒՅՈՒՆ ԽԱՆՈՒՐԸ ՂԻՂԱԿՏԻԿԱՅԻ
ԸԼԿԱՏՄԱԾԲ:

Դիդակտիկա ասելով այս դէպքում պէտք է հասկանալ սովորեցնելու դիդական հիմնառուման ուսումը, այս տեսակէտից փորձնական դիդակտիկան փորձնական մանկավարժութեան այն մասն է, որը նպատակ ունի փորձերի միջոցով հիմնառուել սովորեցնելու մեթոդները։ Սովորեցնելու գլխաւոր նպատակն է ծանօթութիւն տալ սանին, զարգացնել նրա մտաւոր ընդունակութիւնները և, կարողութիւնները ձեւական կողմից։ Փորձնական մեթոդիկան պէտք է որոշէ զործադրութիք մեթոդների աղդեցութիւնը մանուկի աշխատանքի վրայ և թէ ի՞նչ ձեռք է մանուկը հասնում իւր նպատակին։ Կարևոր է ոչ թէ արտաքին յաջողութիւնը, որ մանուկը այդ մեթոդով հասնում է իւր նպատակին, այլ աւելի հետաքրքիրը այն է, թէ ի՞նչ ձեռք է հասաւ նա դրան։

Աւսուցման իւրաքանչիւր մեթոդ ունի նաև որոշ բարոյական կողմ, աղդեցութիւն, մի մեթոդ կարող է մանուկի ուշադրութիւնը կարգաւորել, կամքը ամրապնդել, մեծացնել նրա հաւատը դէպի ուսուցիչը, միւսը կարող է որանցից և ոչ մէկին շնորհատել, ուստի զպրոցում գործադրուած մեթոդը քննելու երկու կողմն էլ պէտք է ի նկատի ունենալ՝ և զուտ ուսուցման և բարոյական։ մե-

քենայական և ճշշող ընոյթ ունեցող մեթոդը հեռու է լինում՝ բառոյական կողմից։ Աւելի կարեռը երկրորդ պահանջն է, որովհետեւ կառելի է շատ հեշտ ձեռք վարժեցնելու մեթոդ գտնել, որը դուրս կլինի բարոյական ազդեցութիւնից։ Նշանակութիւնից։ Փորձնական դիդակտիկայի խնդիրն է նաև հետազօտութեան։ Ենթարկել գասական սկիսոյ քները՝ դասագրքերը, մօդելները, շօշափելի դարձեալ միջայնները, քորտէղները, տետրակները դրչածայրերը և այլն։

Փորձնական դիդակտիկան հետազօտել է առ այժմ ամենատարրական խնդիրները, որոնցից առաջին տեղը ըստում է շօշափելի ուսումը։ Միջնադարեան դպրոցական ուսուցումից (օխօլատոիկա) յետոյ արդէն շօշափելի ուսուցման պահանջ գտնում ենք Ռատելէի, Լոկիի, Զալցմանի, Ռուսոյի աշխատութիւններում։ ՀԻՀ դարու սկզբին այդ պահանջը կանոնաւոր կերպով մշտկեցին ու հիմնառեցին երեք մանկավարժները՝ Պետալոցցին, Ֆրեքէլը և Հերբարը։ Պեստալոցցին պահանջում է շօշափելի ուսուցումը դործադրել ոչ միայն սովորական դաստանդական առարկաների մէջ, այլ և միացած դէմքերում։ Պեստալոցցին նկատում է, որ մարդկութեան իմացութեան հիմքը մտահայեցողութիւնն է. մանուկն սկսում է սնորոշ մտահայեցողութիւնից և հասնում է աւելի որոշի. վերջապէս դադաիարներ է կազմում։ Մտահայեցողութեան զլիաւոր տարրերը ցոյց տալու համար Պեստալոցցին հետեւալ դատութիւնն է առաջ ընթառ. երբ կրթուած մարդը ուզում է իւր առաջ դամած որի է առարկոյ հասկանալ՝ ինչ կէտեր է աշխատում պարզաբանել. այդ կէտերը երեք են՝ հայտ ուզում է թիւն իմանալ, թէ քանի հատ է, երկրորդ՝ առարկայի ըռնած տարածութիւնը, երրորդ՝ աշխատում է այդ առարկային անսուն տալ. այսուղից նաեղբակայնում է, որ մտահայեցողութեան ամենաընդհանուր տարրերն են՝ թիւը, ձեւը և խօսքը, առաջին երկուսը առարկայի առակաւթիւններն են, իսկ խօսքը նպաստում է միայն այդ երկուսի պաշտուելուն և յիշողութեան մէջ

ամրանալուն, Պեստալոցցին այսուեղ զանցառութեան է տուել զգ այսարանքների դերը, նոյնպէս և ժամանակի նշանակութիւնը և այլն Աւառնն էլ այս երեք տեսակէտից է լինում. պէտք է վարժուել ժժուի, ձեի և խօսքի, այն էլ շօշափելի միջոցներով:

Յրէբէլը Պեստալոցցու բացատրութիւնը աւելի լրացնում է, նա տեղ է տալի զգայարանքները զարդացնելու միջոցներին, որոնցով երեխան հնարաւորութիւն է ստանում գոյներին, ձայներին ծանօթանալու. պահանջում է կամքը զարդացնել. այն ինչ որ երեխան իւր մտահայեցողութեան մէջ ունի, պէտք է ձեռքով էլ կոտարէ. շնորհիւ ծեփելուն, զծելուն, մի քա՞ն շինելուն մանուկը ձեւերի մասին որոշ հասկացողութիւն է ձեռք բերում. Շօշափելի ուսուցման իրակետը լինելու է երեխաների բնական հակումը դէպի խաղերը և զբաղմանքը. այս ձեռք երեխան հեշտութեամբ ու հաճոյքով սկսում է սովորել. Մի քանի միայն կարելի է իրս պակասութիւն նկատել, այդ այն է՝ որ Յրէբէլի ամքող ուշադրութիւնը կերպոնացած է եղել միասին փորի մանուկների վրայ և այդ պատճառով նրա մեթոդը գործադրում է միայն մանկական պարտէզում:

Հերըասորը յատկապէս մեծ տեղ է տալի ուշադրութեան զարդացմանը, մանաւանդ մտահայեցողութեան որոշ խմբերի նկատմամբ. երեխան ինքը պէտք է աշխատէ խելամուտ լինել բազմաթիւ ձեւերի, որոշ զեկավարող հայեցքներ ունենալով. փորձնական մանկավարժութիւնը պէտք է պարզէ, թէ ինչպէս է մանուկը իւր մտահայեցողութեան զարդացման զանազան տարիներում, և ապա ինչպիսի նիւթեր են համապատասխանում այդ շրջանին:

Զանազան փորձնական հետազոտութիւններից երեսում է, որ երեխան առհասորակ առանում է, լուսմ է, շօշափում է այն, ինչ որ նա ուզում է տեսնել, լուս և շօշափել. Երեխան տեսնում է այն, ինչ որ նրա կամքը թերագրում է տեսնելու, և ոչ թէ այն. ինչ որ նրա զգայարանքներին ենթակայ է. ուրիշ խօսքով մտահայեցողութեան զարդացումը ծագում է վերջ ի վերջոյ մտահայելու կամքն

ունենալուց, ուստի մտահայեցողութեան կրթութեան համար պէտք է գործադրել առաւելապէս հետեւեալ մեջող-ները՝ 1) Միշտ ազդել մանկան բարեխղճութեան վրայ 2) դիտողութեան նիւթը ոովորհցնել մաս, մաս 3) մա-նուկը պէտք է սովորէ որոշ ղեկավարող հայեցակէտով դիտել:

Դժագրութիւնը պլարզում է թէ ինչպէս մոհուկը իւր զարգացման զանազան շրջաններում՝ զանազանակերպ մտահայեցողութեան տէր է լինում։ Առաջին շրջանում, երբ նու գծում է առարկաների սռուերադիմք՝ գծում է այն, ինչ որ դիտէ այդ առարկայի մասին օրինակ երբ նկատում է մարզուն՝ գծում է զլուխը, քիթը, երկու աչքը, երկու ձեռքը, երկու ոտքը և մատները, այս տեղից երեսում է, թէ մանուկը որ մասերն աւելի կարեւոր է հա-մարում։ Հետզհետէ գծոգրութեան նիւթը բարդանում է և մանուկը աշխատում է նկարը վերլուծել։ յատկապէս սկսում է լաւ դիտել տարածութիւնների յարաբերու-թիւնները։ իրական առարկայի և առա մտահայեցողութեան միջև եղած պատկերի տարածութեան յարաբերութիւնը հետզհետէ պարզում է, մանաւանդ քանակի տեսակէ-տից։ Մտահայեցողութիւնը, այս տեսակէտից, դառնում է դիտակցութեան ներկործական մասը, որովհետեւ 1) տպա-ւոռութիւն ստացով մարդը ոչ թէ պարզ կերպով մի բան է ստանում, այլ նու ստացածի վրան աւելացնում է իւր մտապատկերներին մտապատկերներ կազմելու հա-կումների պաշարից որ և է բան 2) այդ բոլոր գործողու-թիւնների ժամանակ հանդէս է զալի նրա կամքը։

Եօշտիելի տառցման համար առարկաներ ընտրելու դէպքում կասեսը է ուշադրութիւն դարձնել այն հան-գումանքի վրայ, որ նկարները յարաբար լինին մանկան ըմբռնողութեանը։ Առհասարակ շօշափելի տառցման դէպ-քում հարկաւոր է չորս դիտուօր ձնական կէտեր ի նկա-տի ունենալ։ 1) Մտահայեցողութեան համար առաջարկ-ուած առարկաները դիտելու և վարժեցնելու հետ պէտք է աւանդել և դիտելիք առարկայի տարրերը։ երեխունները

պէտքէ վարժուեն նկարուած առարկայի ձևը, մեծութիւնը տարբերել իրական առարկայի ձևից, մեծութիւնից: 2) Մը տահայեցողութիւնը պէտք է զարդանալ որոշ մեթոդով. պէտք է որոշ ծրագրով վերլուծուեն բոլոր առարկաները. երեխան վերլուծութիւնը իրեն ծանօթ գաղափարից պէտք է սկսէ. նա պէտք է առարկան մանրամասն նկարագրէ. սրանից յետու միայն նրան կարելի է ծանօթացնել թէ առարկան ինչի համար է դործագրուում: 3) Մտահայեցողութեանը վարժուելու դէալը որոշ պէտք է ուշադրութիւնը կահոնաւուի. մի բան ծեփելու կամ նկարելու դէալը մանուկի ոչ միայն ձեռքը, աչքը պէտք է վարժուի ոյլ և նու պէտք է կոնսուսոր, ճիշտ գողղափար կաղմէ այդ առարկայի մասին, նրա դործագրութիւնը ըմբռնէ, 4) Շօշափելի ուսուցման դէալը որոշում են նաև մանուկների տիպերը և պէտք է աշխատել, որ նրանց մէջ եղող միակողմանիութիւնները վերջանան, որովհետեւ մանկան բոլոր զգայարանները վարժուում են, և կարեւոր է զգայանքներից ստացած նիւթերից ամեն տեսակի խմբակցութիւններ կազմելուն վարժեցնել:

XII

Մանկան ընթերցանութեան խնդրին վերաբերող փուժեր.

Ընթերցանութիւնը միշտ էլ կարեւոր ու առրական առարկայի է համարուել և ունեցել է ուսուցման մեթոդի որոշ զարդացումը, թէև մինչեւ մեր օրերն էլ չունենք մի այնպիսի մանկավարժ. որը բացատրէր ընթերցանութեան հոգերանական մեխանիզմը և ցոյց տար մանկան և հասակաւորի ընթերցանութեան միջի եղած տիպիկ տարբերութիւնները.

Ընթերցանութեան հոգերանական վերլուծութիւնը ցոյց է տալի, ու խօսքը և նրա բովանդակութիւնը իրենց համար ստեղծել են տեսողական նշաններ՝ գրաւոր տառեր, որոնց շնորհիւ կարելի է առարկայական ճշտութեամբ ուստիերացնել նրանց և հասկանալի դարձնել ընթերցողին. այսպիսով ընթերցանութեան ժամանակ կա-

տառում են երկու գործողութիւն-բանական-մտաւոր և տեսողական։ Ընթերցանութեան վարժեցնելը պահանջում է, որ իւրաքանչիւր տառի տեսողական ձեր զուգորդուի այն ձայնի հետ, որին համապատասխանում է։ Հնարհիւ խօսքի ձայնին՝ զուգորդուած են արտասանութեան համար անհրաժեշտ եղող շարժութիւնը։ Երբ այդ զուգորդութիւնները լրիւ են կազմուած, ասում ենք մանուկը ճանաչում է տառերը։ Հաստկաւոր մարդը կարդում է ոչ թէ առանձին տառերը, այլ բարի ընդհանուր ձևն է ընդդրկում։ Մանուկն էլ կարող է վարժ կարդալ այն ժամանակ, երբ նա հնարաւորութիւն ձեռք կը եւի մի հայեացը ով ճանաչել բառերի ընդհանուր ձեր։

Ամեն մի տառցման նպատակն է եղել մանկանը վարժ ու սահուն ընթերցանութեան հասցնել. սակայն այս նպատակին հասցնող ճանապարհները զանազան գարերում տարբեր են եղել։ Ամենից առաջին և երկարատես մեթոդը եղել է տառականը. այս գեղարդում սովորեցնում են տառերի անունները և ապա ձանօթ տառերից կազմում են վանկեր ու բառեր, յաճախ անդիր էին սովորեցնում ամբողջ այրութենը սկզբից մինչև վերջը և ընդհակառակը. ամեն մի տառը ցոյց էին տալի դրատախտակի վրայ և տում անունը. վանկ կազմում էին հեղեղով. օրինակ այր շա-աշ. ինչ այր խա-աշնա և այլն. հասկանալի է, որ մանուկը գտուարանում էր հասկանալ. թէ ինչպէս այդ մի շարք բարդ ձայններից կազմում է այդքան պարզ բառը. Մարդասէրների մանկավարժութեան մէջ ընդունուած էր դասական մեթոդը. Երեխաններն ստիպուած էին երկար ու ծանր բառեր հեղեղ. օրինակ մեծաճանչարդիավայլականութիւն. կամ ստիպում էին անմիտ վանկեր կազմել. օրինակ բեն-այր-բա, բեն-եշ-բե, բեն-է-բէ-բեն-ո-բո, բեն-օ-բօ և այլն։

Այդ մեթոդի գլխաւոր պակասութիւնը այն է, որ երեխանները ուղղակի չեն իմանում թէ տառը ինչ ձայնի է համապատասխանում. օրինակ այր. այստեղ մի քանի ձայններ կան, որոնցից խականը ա-ն է և երեխան ինըը

սլէտք է որոշէ այդ. Երեխաները այս պատճառով սովորելուն անբարեհուն են վերաբերում։ Այլ և փոխանակիրար մօտիկ, քիչ թէ շատ նման տառերի խմբերի վարժեցնելու նրանք միանգամից այրութենք սովորեցնում էին. Երեխաները բնականաբար դժուարանում էին միանգամից բոլորը յիշել և կարդալիս արդէն շատ տառեր մռացած էին լինում. սրանից առաջ էր դալի կրկնակի աշխատանք և դժուարութիւն:

Տառական մեթոդի հետ վազուց գործադրում՝ էր նաև ձայնական մեթոդը. բայց ուս կողմնակիցներ քիչ ուներ. Չայնական մեթոդի ժամանակ առում է ամեն մի տառի համապատասխանող ձայնը. ոչ թէ այս, ընն, այլ ա. բ., ուսուցիչը աշակերտին ասում է մ'-ի. աշակերտը սկիսի ասի ոճիս թէ և յաճախ ասում է մ'-ի. Չայնական մեթոդն էլ ունի իւր անյարժարութիւնները, որոնց առաջն առնելու համար շատ մանկավարժներ են աշխատել:

Նախկին մեթոդները համագրական ընդութ ունեին. մանուկին առաջ սկարզ առորերի հետ էին ծանօթացնում և յետոյ կազմել էին տալի վանկեր և ամրող բառեր. իսկ այժմ՝ վերլուծական մեթոդը հիմք ընդունում է ամրող բառը կամ խօսքը, և տարրերի հետ ծանօթացնում են. յետոյ մանուկին ասում են սովորական ծանօթ խօսք և ապա սրանց նշանակութիւնը հիմք ընդունելով սկսում են շօշափելի ուսումը։ Տարբեր տեսակի վերլուծական մեթոդներ կան. օրինակ մի մեթոդ սկանչանջում է. որ մանուկին ծանօթացնեն բառերի ձևերի հետ, որովհետեւ հասակաւոր յարդը ամրող բառեր է ընդդրկում մի հայեցքով. իսկ մանուկը սլէտք է հասնի այդ ձևի ընթերցանութեան, դրա համար նկարներ. են տալի մանուկին կամ մանուկը ինքն է նկարում որոշ բառերի իմաստին համապատասխանող նկարներ. այսպիսով նու և կարդում է գրում. օրինակ նկարում է ձու և նկարի մէջ գրում է ձու. Երբ նկարները լաւ կարդում են, սկսում են նկարները կամոց կամաց ջնջել, մնում են միայն բառերն. այժմ աշակերտը կարդում է բառերը. Այս մեթոդը աշ-

լոտում է շահագործել մանուկի միայն յիշողութիւնը. վերլուծական մեթոդը ազատում է մանուկին առանձիւացած ձայների վարժութիւնից, մի բան որը յետու իրեն պէտք չի դալու. անմիտ բառերից ազատում են և դորձնում որոշ նշանակութիւն ունեցող բառերի հետ. այս պատճառով այս մեթոդով վարժուող մանուկները շուտով կարգում են գիտակցօրէն, թէ ոչ այնքան էլ ճիշտ են կարգում. ընթերցանութեան տեխնիկան և մեքենայական կողմը լաւ զարգացած չի լինում.

Ընթերցանութեան խնդրում մանուկները հասակաւորներից տարբերում են նրանով, որ առաջինների մեսազական դիտողութիւնը պակաս ճշտութիւն ունի և կարգավիճակութիւնը բար գուշակում են. բացի այդ, որովհետեւ բառերի քիչ պաշտր են առնենամ, յաճախ ստիպուած են դուշակել. Ընթերցանութիւնը սկսելուց 3 տարի յետոյ մասսայապէս մանուկների մէջ նկատում են այնպիսի ձևեր, որոնք յատուկ են հասակաւորին. 11 տարեկան լաւ կարգացողները այլ ես զանկերով չեն կարգում իրենց մտքում բառերը. այլ միանդամից, վայսկարդով սովորեցնելու հումար հարկաւոր է աշշագրութիւն գարձնել, որ մանուկը վարժուի ճիշտ տեսազական դիտութեան, բառի վերլուծութեան.

Ընթերցանութիւնը մարդկանց մեծ մասի համար ներքին լուղութիւն ու ցոծը արտասահմանութիւն է. մանուկները և անկիրթ հասակաւորները յաճախ շրջմանը շարժում են այդ դէպքում. Մի քանի երեխաներ երբ սկսում են զրբի վրայ կարգով, առաների շատութիւնից շինթում են. այդ պատճառով պէտք է աւելուր ու խանդառզ տպաւորութիւններ առաջ քերող երեսյթները հանել զասագքից. տաղում են որովհետ պէտք է լայն լինեն. աշակերտը ոչ թէ մատով պէտք է հետեւ դառներին, այլ առանձին սուր փայտով. Երեխան չոլէտք է բարձր ձայնով կարգայ մի ուրիշ արդէն կարգալ իմացողի հետ, որովհետեւ նա միայն լուսմ է ուրիշի ձայնը և կրկնում է, իսկ տեսազանութիւնը չի կեղծունակում տառերի վրայ. Պէտք է

կարդալ ծանր որ մանուկը տարրեսը ուզիղ իւրացնէ և զուգորդութիւնները ուղեղում ամրապնդուին, կարդացածի բովանդակութեան հետ պէտք է ծանօթացնել մանուկին, այլապէս նրա համար նիւթը մնում է անհետաք քիր, մահաւանդ որ ինքը գժուարութեամբ է կառդում և բնականաբաս նիւթի գեղեցկութիւնը նսեմանում է:

շարժնակի

Pessimist

ՉՈՐ ՏՂԻ ՄԱՍԻՆ ՎԻՊԱԿԻ.

ՄՈՐԿ ՏՎԵՆԻ^{*)}

Եղել է չեղել մը պոտիկ չար տղայ, և նրա անունն էր Զիմ, թէպէտ սովորութիւն է դառել պոտիկ չար տղէրքին գրեթէ միշտ Յակոբ կոչել, ինչպէս որ շատ հեշտ է համոզուել, եթէ կարդաք կերպելորեայ ուսումնական ըսթերցարանները:

Նոր մինչև անդամ չուներ հիւանդ մայր, — մի այնպիսի հիւանդ մայր, որ լաւ յայտնի է իւր բարեսլաշութեամբ և տառապում է թոքախտից, որ տնշուշու ուրախ է կը լինէր զերեղման մտնել և հանգստանալ, եթէ խանդաղատանօք չոփրէր իւր անդին որդուն և չվախենար, թէ իւր մահից յետոյ մարդիկ կարող են նրա հետ վարուել սառնասորտութեամբ և անդթութեամբ. Ընթերցարանների մէջ նկարագրած չար տղէրանց մեծ մասը կոչում են Յակոբ և ունենում են հիւանդ մայրեր, որոնք նրանց անդաղբում սովորեցնում են տոել՝

«Ես այսօր յոդնեցի, ես ուզում եմ հանդստանալ և այլն», որոնք օրօրը երգում են անոյշ, մեղմ ձայնով, որոնք ընեցնելուց ոռաջ նրանց համբուրում են, անկողնու մօտ չոքում և լոց են լինում: Ո՞չ, այս տղէն այդպիսի բան իսկեւ չուներ:

* Այս երգիծարաններինը չարաչար ծաղրելով Ամբիկայի ընթերցարանները, ոչ նուազ իրատական է զառնում նո հւ մէր համար ։ Ամենօք Շարու.